ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2011թ. թիվ 175-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով “Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի հունվարի 10-ից փետրվարի 17-ը Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մասին” Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008թ. հուլիսի 30-ի ՆԿ-128-Ն կարգադրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. փետրվարի 3-ի N 108-Ն որոշման 5-րդ հավելվածի 1.1 կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011թ. մարտի 15-ի թիվ 92 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված «ՀՀ Լոռու մարզի Ղուրսալ համայնքում բնակարան (բնակելի տուն) ստացող փախստական ընտանիքների ցուցակը»՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետին՝

Ապահովել սույն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված ընտանիքների համար, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. փետրվարի 3-ի N 108-Ն որոշման թիվ 5 հավելվածի 1.1 կետով նախատեսված գումարների շրջանակներում բնակարանների գնման գործընթացը:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011թ. մարտի 15-ի թիվ 92 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից մերժված ընտանիքների ցուցակը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2011թ. հուլիսի 15
ք.Վանաձոր